ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Համավարակի ազդեցությունը կրթական գործընթացի վրա ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում

Հետազոտությունն իրականացվել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի մասնակիցների ջանքերով

2020թ.

Ուսանողության ձայն

Նախաբան

Չինաստանի Ուհան քաղաքում ի հայտ եկած, այնուհետև ողջ աշխարհում արագորեն տարածված նոր տեսակի կորոնավիրուսի պատճառով առողջապահական համակարգի կողքին ճգնաժամային իրավիճակում հայտնվեցին բազմաթիվ երկրների այլ ոլորտներ ևս: Համավարակով պայմանավորված իրադրությունը դարձավ մեծ մարտահրավեր նաև կրթական համակարգի համար: Ստեղծված պայմաններում տարբեր երկրներում ուսումնական հաստատություններն ստիպված եղան անցնել հեռավար ուսուցման իրականացմանը ուսանողների կրթության անընդհատությունն ապահովելու համար:

Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական ուսումնական հաստատություններում ևս մինչ ուսումնական տարվա ավարտը ուսումնական գործընթացներն իրականացվեցին, ինչպես նաև սովորողների հետ կապը ապահովվեց հեռավար տարբերակով: Ուսուցման առցանց կազմակերպումը պահանջեց նոր մոտեցումներ ստեղծված մարտահրավերներին դիմակայելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար առցանց ուսուցումը լիովին նոր փորձություն էր, վերջինիս իրականացման ընթացքում ի հայտ եկան բազմաթիվ խորչընդոտներ: Առաջ եկան բազմաթիվ բովանդակային և տեխնիկական խնդիրներ, որոնց լուծումը պահանջում էր հաստատությունների բոլոր ներքին ու արտաքին շահակիցների աջակցային մասնակցությունը և ստեղծագործ մոտեցումը: Միևնույն ժամանակ համավարակով պայմանավորված իրավիճակը ստեղծեց նոր հնարավորություններ՝ վերարժևորելու կրթական գործընթացները:

Սույն հետազոտության ***նպատակն*** է վեր հանել 2019-20թթ. ուսումնական տարվա ավարտին համավարակի պայմաններում բարձրագույն և միջին մասնագիտական հաստատություններում հեռավար տարբերակով ուսուցման կազմակերպման թույլ կողմերը, հիմնական խնդիրներն ու դժվարությունները, դրանց հաղթահարման վերաբերյալ ուսանողության առաջարկները, ինչպես նաև գտնել ու շեշտադրել գրանցված լավ փորձը՝ վերջիններիս տարածման նպատակով: Աշխատանքը կատարվել է «Ուսանողության ձայն» նախագծի շրջանակներում: Կրթության հեռավար կազմակերպման վերաբերյալ սույն հետազոտությունը կատարվել է ուսանողության աչքերով՝ ուսանողների հայտնած տեսակետների և առաջարկների հիման վրա:

Հետազոտության շրջանակում իրականացվել են ֆոկուս-խմբային քննարկումներ ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՈՒՀ) ուսանողների հետ: Դրանց ընթացքում ուսանողների հետ քննարկվել են հեռավար տարբերակով իրականացվող դասընթացների կազմակերպման ընթացքում դասախոսների կողմից ընտրված մեթոդները, ուսանողների գնահատումը, ուսումնառության կազմակերպման ձևով պայամանավորված կրթական ծրագրերում տեղի ունեցած փոփոխություններն ու դրանց ազդեցությունը դասընթացների վրա, հաստատությունների տեխնիկական հագեցվածությունն ու պատրաստվածության մակարդակը: Ֆոկուսխմբային հանդիպումներին մասնակցել են տարբեր ոլորտի մասնագետներ պատրաստող ՀՀ պետական և ոչ պետական ՄՈՒՀ-երի ուսանողներ (հիմնականում հետևյալ ոլորտներից. բժշկություն, մանկավարժություն, արվեստ,

սպորտ, ճարտարագիտություն, ճարտարապետություն, ռազմական գործ և արտակարգ իրավիճակներ և այլն): Ուսումնառության հեռավար կազմակերպման խնդիրների ուսումնասիրության, ֆոկուսխմբային քննարկումներից դուրս բերված վերլուծությունն առավել հստակ ներկայացնելու, ինչպես նաև հավաստի թվային տվյալներ ունենալու, հետազոտության շրջանակներում ուսանողների առավել մեծ շրջանակներին ներգրավելու նպատակով իրականացվել է նաև հարցում ՀՀ մի շարք ՄՈՒՀ-երում սովորող ուսանողների առավել լայն շրջանակների հետ:

Հետազոտության շրջանակներում ուսանողների հետ իրականացվող ֆոկուսխմբային հանդիպումներին զուգահեռ ՈԱԱԿ-ը կազմակերպել էր մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ հանդիպումներ՝ քննարկելու համավարակով պայմանավորված իրավիճակում առաջացած խնդիրները, ինչպես նաև լավագույն փորձը: Ուսանողների հետ հանդիպումների ընթացքում ակտիվորեն քննարկվել են նաև վերոնշյալ հանդիպումների ընթացքում հնչած դիտարկումները, որոնք արվել են կրթական հաստատությունների որակի ապահովման պատասխանատուների և դասախոսների կողմից:

Հետազոտությունը **բաղկացած է** նախաբանից, հիմնական հատվածից, ամփոփումից, առաջարկների հատվածից:

Անցումը ուսուցման հեռավար տարբերակին

Դեմ առ դեմ ուսուցումից անցումը ուսուցման հեռավար կազմակերպմանը առաջ բերեց ճկունություն ցուցաբերելու անհրաժեշտություն ՀՀ ՄՈՒՀ-երում, քանի որ ծագեց ուսումնական գործընթացի վերապլանավորումների, ադապտացումների, տեխնիկական և այլ խնդիրների հաղթահարման կարիք: Ուսումնական հաստատությունները, իրավիճակով պայմանավորված, լսարանային դասաժամերը տեղափոխեցին առցանց հարթակ: Մինչ համավարակը ՀՀ ՄՈՒՀ-երի մեծամասնությունը չուներ հեռավար դասընթացներ կամ հեռավար կրթություն իրականացնելու փորձառություն:

Ըստ հետազոտության արդյունքների՝ հարցված ուսանողների միայն 11,28%-ի ուսումնական հաստատություններն են մինչև համավարակը իրականացարել օնլայն դասեր, իսկ մասանկիցների 88,72%-ի պնդմամբ իրենց հաստատությունները մինչ համավարակը չեն իրականացրել այս եղանակով դասընթացներ:



Դիագրամ 1

Ստեղծված պայմաններում ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունները կանգնեցին մի շարք խնդիրների առջև, մասնավորապես՝ դասացուցակների վերադասավորում, կարգավորում, քննությունների ժամանակացույցերի փոփոխություն, դրանց անցկացման մեթոդների վերանայում, տեսական ու գործնական դասերի, պրակտիկաների վերապլանավորում:
ՀՀ մասնագիտական ուսումնական մի շարք հաստատություններ, ելնելով իրենց իրականացրած կրթության առանձնահատկություններից, ստիպված եղան որոշ դասընթացներ (հատկապես գործնական, լաբորատոր պարապմունքներ) հետաձգել հաջորդ ուսումնական տարի: Նման դասընթացները հաճախ պահանջում են հստակ միջավայրի, դասախոսի հետ անմիջական հաղորդակցման, խորհրդակցության, կատարված աշխատանքի վերաբերյալ դասախոսի տեղում արված արձագանքի առկայություն, ինչը հեռավար տարբերակով դժվար և երբեմն անհնար էր իրականացնել: Այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ ՄՈՒՀ-երում առաջացավ ուսումնառության և դասավանդման մեթոդների փոփոխության անհրաժեշտություն: ՀՀ ՄՈՒՀ-երում պրոֆեսորադասախոսական անձնակազմը կանգնեց լսարանում դեմ առ դեմ ուսուցման ընթացքում կիրառված դասավանդման ու ուսումնառության մեթոդներն ու ձևերն առցանց տարբերակով ուսուցմանը հարմարեցնելու անհրաժեշտության առջև:

Քննությունների կազմակերպում և գնահատում

Առցանց կամ հեռավար ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման մեկնարկը շատ ՄՈՒՀ-երում համընկավ միջանկյալ քննությունների հետ: Մի շարք հաստատություններ նոր ու անսովոր իրավիճակով պայմանավորված ստիպված եղան չեղարկել միջանկյալ քննութունները: Ավելին, հետազոտության ֆոկուս խմբերի հետ հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ ուսումնական հաստատությունների մի մասում 2019-20թթ. ուսումնական

տարվա ավարտական քննություններում հնարավոր չի եղել ստուգել գործնական հմտությունները: Ավարտական քննությունների ժամանակ ուսանողները ներկայացրել են հիմնականում տեսական նյութերը:

Ուսումնական գործընթացում արդյունավետ գնահատում և միջանկյալ ստուգում իրականացնելու համար ևս առաջացավ որոշակի նոր մեթոդների ու գործիքների կիրառման անհրաժեշտություն: Հետազոտության ընթացքում մասնակիցների կողմից թվարկված ուժեղ կողմերի և առավելությունների հետ մեկտեղ մատնանշվեցին նաև մի շարք թերություններ հատկապես գնահատման հետ կապված: Ի տարբերություն լսարանային պայմանների՝ այս դեպքում քննության ընթացքում դասախոսը չունի լիարժեք վերահսկողություն ուսանողի նկատմամբ այն առումով, որ հեռավար տարբերակով դասախոսի համար դժվար է լիարժեք համոզված լինել, որ ուսանողի աշխատանքը կատարվել է ինքնուրույն: Այս խնդրից խուսափելու համար հեռավար կրթություն իրականացնող օտարերկրյա հաստատությունները կիրառում են տարբեր գործիքներ, մեթոդներ (ուսանողի վիդեո-ճանաչելիություն, ժամանակային հստակ սահմանափակում և այլն):

Դասավանդման մեթոդներ և հանձնարարականներ

Միևնույն ժամանակ հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ առցանց հարթակներում աշխատելով ուսումնական հաստատությունները հնարավորություն են ունեցել ծանոթանալ այդ հարթակներում առկա նոր գործիքների բավական լայն շրջանակի: Գործիքները կարելի էր կիրառել դասապրոցեսում նոր մեթոդներ ներդնելու համար: Ուսուցման այս ձևով դասախոսները նախապես ուղարկում կամ հարթակների միջոցով տարածում էին ուսուցանվող նյութերը, համապատասխան գրականությունը: Այնուհետև օնլայն հարթակով դասերի ընթացքում ուսանողների հետ արդեն քննարկում նախապես տրամադրված նյութերը:
Ուսուցման այս տարբերակի միջոցով դասախոսների շրջանում լայն տարածում ստացան դասապրոցեսում անհատական սահիկաշարերի (պրեզենտացիաների) քննարկումը: Վերջիններովս հնարավոր էր կիսվել և այն ցուցադրել բոլոր ուսանողներին տեսանելի ձևով՝ արդյունքում ավելի հետաքրքիր դարձնելով ուսուցանվող նյութը: Նախկինում ՀՀ ՄՈՒՀ-երից շատերը չունեին տեխնիկական ապահովվածություն բոլոր դասերը տվյալ ձևով կազմակերպելու համար:

Այնուամենայնիվ, հետազոտության շրջանակներում կազմակերպված ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ ըստ ուսանողների մեծամասնության դասերն առավել արդյունավետ էին լսարանային պայմաններում, դասախոսի հետ անմիջական շփման պարագայում: Սրա վերաբերյալ հետազոտության հարցման մասնակիցների 68,78%-ի պնդմամբ իրենք առավել լավ են սովորում դեմ առ դեմ ուսուցման ժամանակ և միայն 19,84%-ն է սովորում հավասարապես լավ թե՛ դեմ առ դեմ ուսուցման և թե՛ օնլայն ձևով:

Ուսուցման կազմակերպման ո՞ր տարբերակով եք ավելի լավ սովորում:	
Առցանց ուսուցման դեպքում	10.51%
Դեմ առ դեմ ուսուցման դեպքում	68.87%
Երկուսի դեպքում էլ հավասարապես	19.84%
Այլ	0.78%
Ընդամենը	100%

Աղյուսակ 1

Ինչ վերաբերում է դասախոսական անձնակազմի դասավանդման իրականացմանը, այս դեպքում ևս հետազոտության մասնակիցների մեծամասնությունը՝ պատասխանողների 69.65%-ը կարծում է, որ դասախոսներն առավել լավ են դասավանդում ուսուցման ավանդական՝ լսարանային պայմաններում իրականացվող դասերին: Մասնակցիների միայն 7.39%-ն է կարծում, որ դասախոսի դասավանդումն արդյունավետ է առցանց ձևով ուսուցման ժամանակ.

Ուսուցման կազմակերպման ո՞ր տարբերակով են դասախոսները ավելի լավ դասավանդում:	
Առցանց ուսուցման դեպքում	7.39%
Դեմ առ դեմ ուսուցման դեպքում	69.65%
Երկուսի դեպքում էլ հավասարապես	22.18%
Այլ	0.78%
Ընդամենը	100%

Աղյուսակ 2

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ուսանողության ձայն

Հետազոտության մասնակիցների պնդմամբ առցանց ուսուցման պայմաններում փոփոխվել է տրվող հանձնարարականների բնույթը, մեծացել է *ինքնուրույն աշխատանքի բաղադրիչը*: Ֆոկուսխմբային հանդիպումների ընթացքում որպես դրական կողմ նշվեց այն, որ փոխվել է նաև ուսանող-դասախոս անհատական շփումը: Վերջինս առավել ընդլայնվել է. ուսանողներն սկսել են առավել սերտ համագործակցել դասախոսների հետ: Նախկինի համեմատ դասախոսը դարձել է առավել հասանելի ուսանողին այն առումով, որ ստեղծվել է յուրաքանչյուր պահին միմյանց հետ տարբեր եղանակներով կապ հաստատելու, արձագանք ստանալու մեծ հնարավորություն: Բացի այդ, ուսանողը ձեռք է բերել ավելի մեծ ինքնուրույնություն և ազատ ժամանակ՝ իր ուսումնառությունը կազմակերպելու համար: Այսպիսով, պետք է փաստել, որ կրթության հեռավար կազմակերպման ընթացքում արդյունավետ մեթոդ է ուսանողներին անհատական աշխատանքների հանձնարարումը և դասախոսի կողմից դրանց տրվող անհատական հետադարձ կապը:
Արդյունքում կարելի է գալ այն եզրակացությանը, որ հնարավոր է եղել ուսուցման հեռավար կազմակերպման ընթացքը արդյունավետ իրականացնել, երբ դասախոսը դասավանդման մեթոդների և հանձնարարականների բնույթը փոփոխելիս դրսևորել է ճկունություն, նորարարություն:

Այնուամենայնիվ այն հարցին, թե ինչ կարծիք ունեն ուսանողները դասապրոցեսի ձևի փոփոխման արդյունքում կրթության որակի վերաբերյալ, հարցվածների 59.92 %-ը պատասխանել է, որ այն տուժել է, իսկ 26.46%-ի կարծիքով որևէ փոփոխություն չի եղել և որակը մնացել է նույնը: Եվ միայն հարցվածների 11.67% -ն է գտնում, որ որակը լավացել է:

Ինչպե՞ս է փոփոխվել կրթության որակը հեռավար կազմակերպման պայմաններում:	
Որակը տուժել է	59,92%
Որակը լավացել է	11,67%
Մնացել է նույնը	26,46%
Այլ	1,95%
Ընդամենը	*100%*

Աղյուսակ 3

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ուսանողության ձայն

Գործնական հմտություններ և պրակտիկայի կազմակերպում

Կրթական գործընթացների հեռավար կազմակերպման ժամանակ ըստ հետազոտության մասնակիցների դժվարություններ են առաջ եկել հատկապես ***գործնական հմտությունների ձեռքբերման*** և ***պրակտիկաների իրականացման*** հարցերում: Հատկապես խնդիրներ առաջացան պրակտիկ մասնագետներ թողարկող ուսումնական հաստատություններում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Վերջիններս հիմնականում պատրաստում են պրակտիկ հմտությունների տիրապետող մասնագետներ (խոհարարներ, մեխանիկներ, տեխնիկներ, դերձակներ և այլն), ուստի ուսումնական գործընթացն այստեղ մեծապես իրականացվում է լաբորատոր, գործնական միջավայրում: Այսինքն՝ գործնական մասը գերակշռում է: Այնինչ հատկապես միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները և այնպիսի մասնագիտություններ իրականացնող հասատատություններ, ինչպիսիք են բժշկությունը, արվեստը, սպորտի ուղղվածության մասնագիտությունները, առավել մեծ չափով բախվեցին խնդիրների: Սա կարող է ազդել ուսանողների շրջանում վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերմանը: Պարզ դարձավ, որ այնպիսի դասերը, որոնք պետք է անցկացվեին լաբորատոր պայմաններում, համավարակի ընթացքում հիմնականում չեն իրականացվել: Հետևաբար սահմանված հմտությունները ձեռք բերելու հնարավորություն չի եղել, և ուսանողները ստիպված են եղել բավարարվել միայն տեսական մասով: Հետազոտության ընթացքում ֆոկուսխմբային հանդիպումների մասնակիցների մեծամասնությունը որպես ուսուցման հեռավար կազմակերպման թույլ կողմ մատնանշել է հենց գործնական դասերի ոչ լիարժեք և արդյունավետ իրականացումը:

Միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում որոշ մասնագիտությունների դեպքում ուսումնառության առաջին կուրսերում գերակշռում են տեսական դասընթացները: Այս առումով հետազոտության մասնակիցները բազմիցս նշեցին, որ ուսումնառության սկզբնական տարիներին (1-ին, 2-րդ կուրս), երբ շեշտը դրված է տեսական գիտելիքների վրա, հեռավար կրթությունը բարդություններ չի առաջացնում և նույնիսկ բավական արդյունավետ է. ուսանողներն այս տարբերակով բավականին ռեսուրներ և ժամանակ են խնայել, և դասերն այս առումով արդյունավետ են իրականացվել: Այնուամենայնիվ, ավելի բարձր կուրսերում, երբ կարիք կա մասնագիտությանը համապատասխան միջավայրում իրականացնելու գործնական դասեր, առաջ են եկել վերոնշյալ դժվարությունները:

Հետազոտության ընթացքում հայտնի դարձավ, որ այս խնդիրը հաղթահարելու նպատակով որոշ հաստատություններ որոշել են հետաձգել գործնական բաղադրիչի կատարումը՝ իրավիճակի կարգավորումից հետո այն իրականացնելու նպատակով: Սակայն ուսանողների հետ քննարկումները ցույց տվեցին, որ այս եղանակը լիովին արդյունավետ չէ, քանի որ յուրաքանչյուր տեսական դասին հաջորդող գործնական պարապմունք ունի տեսականի գիտելիքները ամրապնդելու նպատակ: Գործնական դասի իրականացման հետաձգումը ըստ էության կարող է ազդել վերջինիս արդյունավետության վրա:

Հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ ՀՀ որոշ ՄՈՒՀ-երի դասախոսներ փորձել են տարբեր եղանակներով հաղթահարել գործնական հմտությունների ձեռքբերման պակասը: Մասնավորապես՝ կազմակերպել են դասերի ընթացքում մասնագիտական տեսանյութերի ուսումնասիրում, վերլուծում, որի միջոցով ուսանողների շրջանում զարգանում է վերլուծական միտքը: Ֆոկուսխմբային քննարկման ընթացքում որպես լավ փորձ մատնանշվեց այն, որ որոշ դասախոսներ գործնական աշխատանքը լաբորատոր միջավայրում նկարահանել և ուսանողների շրջանում տարածել են, այնուհետև կազմակերպել դրա քննարկումը:

Դասախոս-ուսանող շփումը և ուսանողների մասնակցությունը հաստատության կառավարման գործընթացներին

Համավարակով պայմանավորված հեռավար ուսուցումը վերոնշյալ փոփոխությունների հետ մեկտեղ ազդել է ոչ միայն ուսանող-դասախոս, այլ նաև հենց ուսանողների միջև իրականացվող ամենօրյա հաղորդակցման վրա: Սրա արդյունքում նվազել է ուսանողների տեղեկացվածության մակարդակը հաստատության կրթական պրոցեսների կառավարման գործընթացների, իրենց վերաբերող որոշումների կայացման վերաբերյալ: Ուսանողների ոչ հաճախակի շփումը երբեմն ազդել է նրանց՝ հաստատության տարբեր գործընթացներում ներգրավվածության, նրանց կողմից խնդիրների բարձրաձայնման, միմյանց հետ դրանք քննարկելու և հետևողականորեն դրանց լուծմանը հասնելու գործընթացների վրա: Ուստի, կարելի է եզրակացնել, որ ստեղծված պայմանները մարտահրավեր էին նաև ուսանողական կառույցների համար՝ ուսանողների արդյունավետ շփումն ու ներգրավվածությունն ապահովելու հարցում: Ֆոկուսխմբային քննարկումների արդյունքում, այնուամենայնիվ, պարզ դարձավ, որ ուսանողները ներգրավված են եղել առցանց ուսուցման խնդիրների վերհանման գործընթացին: Մասնավորապես ուսանողների մի մասը մասնակցել է իրենց հաստատություններում առցանց ուսուցման վերաբերյալ օնլայն հարցումների, ինչպես նաև այս թեմայով կազմակերպված հանդիպումների:
Հետազոտությունից պարզ դարձավ, որ որոշ ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնական մանրամասները դասախոսները քննարկվել են ուսանողների հետ: Այս դեպքում դասախոսները ուսանողների խնդիրներին ցուցաբերել են անհատական մոտեցում: Ուստի, պետք է նշել, որ այս պայմաններում դասապրոցեսի անցկացման մանրամասների վերաբերյալ դասախոսները առավել բաց էին ուսանողների առաջարկների ու պահանջների նկատմամբ:

Առցանց տարբերակով կրթության իրականացման որակի կարևոր ցուցիչ է ուսանողության բավարարվածությունը: Հարցին, թե ինչպես են գնահատում օնլայն ուսուցման իրականացումը իրենց ուսումնական հաստատությունում, ուսանողների տված պատասխանները ունեն ստորև պատկերված աղյուսակում ներկայացված տեսքը:

Ուսանողների բավարարվածությունը *Ինչպե՞ս եք գնահատում ուսուցման հեռավար կազմակերպումը ձեր ուսումնական հաստատությունում:*	
Անբավարար	*20,23%*
Ավելի շատ վատ	*28,40%*
Ավելի շատ լավ	*37,74%*
Գերազանց	*13,62%*
Ընդհանուր	*100%*

Աղյուսակ 4

Համաձայն Աղյուսակ 4-ի, հարցվածների 28.40%-ը գտնում է, որ իր հաստատությունում առցանց ուսուցումը ավելի շատ վատ է իրականացվել, 37.74%-ը՝ ավելի շատ լավ: Ուսանողության 13.62%-ը լիովին բավարարված է իր հաստատության կողմից ուսուցման հեռավար իրականացումից, մինչդեռ 20.23%-ը բավարարված չէ հեռավար ուսուցումից:

Առցանց հարթակների կիրառումը և տեխնիկական բնույթի դժվարությունները

Համավարակի պայմաններում կտրուկ անցումը դասական լսարանային դասապրոսեցից հաճախ շոկային էր հատկապես այն ուսումնական հաստատությունների համար, որոնք առանձնապես չունեին դասերի հեռավար կազմակերպման փորձ: Խոսքը հատկապես վերաբերում է ՀՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, որոնք ունեցան ոչ այնքան հարթ անցում: Հաստատություններից շատերը համավարակի տարածման առաջին օրերին դասընթացները չդադարեցնելու համար պլանավորված դասերը սկսեցին իրականացնել դասախոսական կազմին հասանելի առցանց հարթակների միջոցով: Առցանց համատեղ հարթակով դասընթացների կազմակերպումը որոշ հաստատությունների համար պահանջեց բավական երկար ժամանակ:
Ուսուցման հեռավար կազմակերպման գործընթացում առաջ եկան այն կազմակեպելու և արդյունավետ իրականացնելու համար նաև մի շարք տեխնիկական խնդիրներ: ՀՀ որոշ ՄՈՒՀ-եր չունեին հնարավորություն կազմակերպելու կրթական գործընթացը առցանց հարթակների միջոցով, քանի որ դրանցից օգտվելու անհրաժեշտություն նախկինում չէր եղել: Ֆոկուսխմբային հանդիպումներից պարզ դարձավ, որ որոշ ուսանողներ համավարակի սկզբնական փուլում հնարավորություն չեն ունեցել մասնակցելու դասընթացներին տեխնիկական միջոցների (համակարգիչ, ինտերնետ հասանելիություն և այլն)

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ուսանողության ձայն

բացակայության պատճառով: Հատկապես մարզերում այս խնդրի առկայությունը ուսումնական գործընթացներից դուրս էր թողել որոշ թվով ուսանողների:
Հեռավար ուսուցման կազմակերպման համար ՀՀ ՄՈՒՀ-երում օգտագործվել են տարբեր հարթակներ, որոնցից ամենից կիրառվածը Zoom ծրագիրն է: Հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ որոշ հաստատություններում՝ մասանվորապես միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, սկզբնական շրջանում կիրառվել են տարբեր՝ տվյալ պահին հասանելի հարթակներ: Հաստատությունները որոշակի ժամանակահատվածում անցում են կատարել արդեն Zoom կիրառմանը: Այդուհանդերձ, պետք է փաստել, որ կիրառվել է Zoom-ի բոլորին հասանելի տարբերակը, որը նախատեսված է քառասուն րոպե հանդիպման համար, այսնինքն՝ ոչ բոլոր ուսումնական հաստատություններն էին այդուհանդերձ գնել հարթակից անսահմանափակ ժամանակահատվածով օգտվելու իրավունքը: Հետազոտության մասնակցիների պնդմամբ ութսուն րոպե տևողությամբ դասընթացները հաճախ կրճատվել էին այս պատճառով, իսկ շատ հաճախ ստիպված են եղել միանալ դասընթացին նորից՝ քառասուն րոպեն լրանալուն պես: ՀՀ ՄՈՒՀ-երը համավարակի սահմանափակումների պայմաններում հատկապես դասընթացներն առցանց կազմակերպելու առաջին օրերին օգտագործել են նաև Google Meet, Viber, Whatsapp, Messenger և այլ հավելվածներ:
Դիագրամ 2-ում երևում են այն հարթակները, որոնցից օգտվել են ՀՀ ՄՈՒՀ-երը: Մեծամասնությունը կիրառել է Zoom ծրագիրը՝ ըստ պատասխանողների 58,19%-ի, հաջորդ առավել տարածված հարթակը Messenger-ն է՝ հարցված ուսանողների 15,11% արդյունքով:

Կրթության հեռավար կազմակերպման ընթացքում կիրառված առցանց հարթակները՝ ըստ տոկոսային բաշխման:



Դիագրամ 2

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ուսանողության ձայն

Վերոնշյալ հարթակների արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ են նաև որոշակի հմտություններ, որոնք հեշտ հասանելի չէին դասախոսական կազմի բոլոր տարիքային խմբերի համար: Այս խնդրի հաղթահարման համար ՀՀ ՄՈՒՀ-երում ձեռնարկվել են քայլեր ինչպես ուսումնական հաստատությունների, այնպես էլ ուսանողության կողմից: Հետազոտությունից պարզ դարձավ, որ հաստատությունները կազմակերպել են այս թեմայով վերապատրաստումներ, ուսանողները ևս ակտիվորեն աջակցել են դասախոսներին առցանց հարթակներից օգտվելու հմտությունները յուրացնելու գործում (ասվածը վերաբերում է միջինից բարձր տարիք ունեցող դասախոսական անձնակազմին): Ֆոկուս խմբերի հանդիպումների ընթաքում մատնանշվեց նաև առցանց ուսուցման դեպքում դասացուցակների ժամային շեղումների առաջ բերած խնդիրը: Թեև ուսանողների մի մասին շատ ավելի հարմար է դասախոսների հետ քննարկման արդյունքում միևնույն հայտարարի գալ դասի անցկացման ցանկալի ժամի շուրջ, այնուամենայինիվ այս ոչ հստակ գրաֆիկը որոշ մասի համար ստեղծում է անհարմարություններ: Հարցված ուսանողների կեսից ավելին (52,14%) առցանց հարթակներն ակտիվորեն կիրառում է նաև այլ՝ համալսարանից դուրս կազմակերպվող դասընթացներին մասնակցության համար:

Օգտագործում է՞ք արդյոք օնլայն հարթակները այլ դասընթացների մասնակցելու համար:	
Ոչ	*47,86%*
Այո	*52,14%*

Աղյուսակ 5

Հետազոտության ընթացքում ուսանողները բարձրացրին այն հարցը, որ ստեղծված պայմաններում չեն կարողացել օգտվել գրադարաններից: Հատկապես խնդիրը մատնանշեցին ավարտական կուրսերի ուսանողները, որոնք իրականացնում էին հետազոտական (ավարտական) աշխատանքներ: Այս խնդրի արդյունավետ հաղթահարման համար ֆոկուսխմբային հանդիպումների ժամանակ ուսանողները շեշտեցին, որ նման պայմաններում էլեկտրոնային գրադարանների ստեղծման կամ համալրման էլ ավելի մեծ անհրաժեշտություն է առաջ եկել:

Ուսանողների պատասխանները հարցման մեջ առկա այն ձևակերպմանը, թե ինչպե՞ս կցանկանան շարունակել իրենց հետագա ուսումնառությունը, ներկայացված է 3-րդ դիագրամում:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ուսանողության ձայն



Դիագրամ 3

Ըստ դիագրամի՝ հարցվածների 13.62 %-ը նախընտրում է ամբողջությամբ հեռավար եղանակով ուսուցումը, 6.61%-ը գտնում է, որ որոշ տեսական դասեր կարելի է անցկացնել հեռավար եղանակով: Ուսանողների 13.62%-ը ուսուցման երկու՝ առցանց և ոչ առցանց (դեմ առ դեմ) տարբերակների զուգակցման (հիբրիդային) եղանակով կրթությունն է նախընտրում: Այնուամենայնիվ, հարցմանը մասնակցած ուսանողների մեծամասնությունը՝ 63.42%-ը, ցանկություն է հայտնել կրթությունը շարունակել ավանդական, դեմ առ դեմ ուսուցմամբ՝ հեռավարի բացառման եղանակով:

Ամփոփում

Համավարակով պայմանավորված կրթության հեռավար կազմակերպումը մեծ մարտահրավեր է կրթական ոլորտի՝ այդ թվում միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: Ուսուցման առցանց իրականացումը ենթադրում է նոր մոտեցումներ նաև որակի ապահովման ոլորտում: Ուսումնական հաստատությունը այս պայմաններում էլ շարունակում է մնալ կրթության որակի պատասխանատուն:
Ուսանողները՝ որպես ներքին շահակիցներ և կրթության հիմնական կրողներ, անմիջական կերպով տեսնում և զգում են համավարակով պայմանավորված կրթության հեռավար կազմակերպման ուժեղ և թույլ կողմերի ազդեցությունը: Դրանից ելնելով՝ նրանք կարող են առաջ եկած խնդիրների համար առաջարկել արդյունավետ լուծումներ: Ուստի,

հաստատությունները պետք է մշտական հաղորդակցման մեջ լինեն ուսանողության հետ և ականջալուր լինեն վերջիններիս բարձրցրած խնդիրներին ու լուծման առաջարկվող տարբերակներին:
Ինչպես արդեն տեսանելի եղավ հետազոտության հիմնական մասում, կրթության հեռավար կազմակերպման ընթացքում առաջ են եկել ինչպես բազմաթիվ խնդիրներ ու դժվարություններ, այնպես էլ ստեղծվել են նոր հնարավորություններ, գրանցվել են լավ փորձի ձևավորման բազում դեպքեր:
Ամփոփելով կատարված հետազոտությունը՝ առանձնացրել ենք ՀՀ ՄՈՒՀ-երում կրթության հեռավար կազմակերպման հիմնական **թույլ** և **ուժեղ կողմերը**, որոնք հարցման ընթացքում առավել հաճախ շեշտվել են հետազոտության մասնակից ուսանողների կողմից:

Թույլ կողմեր

- կենդանի շփման (ուսանող-դասախոս, ուսանող-ուսանող) բացակայություն,
- անսպասելի անցման արդյունքում ուսանողների մոտ որոշ ֆիզիկական և հոգեբանական դժվարությունների առաջացում,
- լիարժեք ուսումնական միջավայրի բացակայություն,
- դասացուցակներում ժամային չֆիքսված ու ոչ այնքան հստակ գրաֆիկ,
- դասախոսի կողմից դասապրոցեսը լիարժեք կառավարելու, ուսանողի հետ անմիջական շփման հնարավորություն չունենալու խնդիր,
- ՄՈՒՀ-երի գրադարանային ռեսուրսների, էլեկտրոնային գրադարանների ոչ լիարժեք հագեցվածություն կամ անհասանելիություն,
- պրակտիկաների բացակայություն, գործնական, լաբորատոր դասերի անժամկետ հետաձգում,
- քննությունների ոչ այդքան լավ պլանավորված և ոչ անաչառ իրականացում,
- տեխնիկական խնդիրների առաջացում (ինտերնետ կապի և տեխնիկական միջոցների հնարավորության, առցանց հարթակներից օգտվելու հմտությունների պակաս):

Ուժեղ կողմեր

- առցանց կրթության հարթակներից օգտվելու ձեռքբերված հմտություններ և փորձառություն,
- հեռավար կրթության զարգացման հնարավորությունների ստեղծում,
- օտարերկրյա և մարզերի ուսանողների համար իրենց բնակավայրերից դասերին մասնակցելու հնարավորություն,
- ճկուն գրաֆիկի առկայություն, ուսումն աշխատանքի հետ համատեղելու հնարավորություն,
- ուսանողների ինքնուրույն սովորելու կարողության զարգացում,
- դասընթացների ինտերակտիվ մեթոդների կիրառություն (սահիկաշարերով, հոլովակներով հագեցվածություն),
- դասերը տեսաձայնագրելու հնարավորություն (դասը բաց թողնելու դեպքում այն լրացնելու հնարավորություն),

- դասախոսների և ուսանողների միջև առցանց հաղորդակցման մշակույթի ձևավորում,
- ուսումնական հաստատություն հասնելու համար հատկացվող ժամանակի և գումարի տնտեսում:

Հետազոտության ընթացքում մասնակիցները վերոնշյալ խնդիրները հաղթահարելու ուղղությամբ **առաջարկներ** ներկայացրին:
Նախևառաջ դասախոսների շրջանում առցանց հարթակների օգտագործման հարցում առաջ եկած խնդիրների լուծման համար ուսանողների կողմից առաջարկվեց կազմել ուսանողական խմբեր, որոնք կարող են աջակցել դասախոսներին:
Կրթությունը հեռավար տարբերակով արդյունավետ կազմակերպելու համար առաջարկվում է առցանց կրթության դեպքում մեծացնել ինքնուրույն աշխատանքների ծավալը՝ ապահովելով աշխատանքների վերահսկողությունը դասախոսների կողմից և ակտիվացնելով համապատասխան հետադարձ կապը: Այս առաջարկը կիրառելի կլինի նաև դեմ առ դեմ ուսուցման պարագայում:
Պրակտիկ դասերի արդյունավետության բարձրացման համար առաջարկվում է գործնական դասերի տեսաձայնագրությունների պատրաստումը, ուսանողների շրջանում դրա տարածումը: Մասնավորապես, գործնական պարապմունքները, լաբորատոր փորձարկումները կարող են իրականացվել դասախոսի կողմից, որի տեսաձայնագրությունը ուսանողների շրջանում տարածելուց հետո դրա շուրջ համատեղ քննարկում կկազմակերպվի:
Պրակտիկ դասերի բացը լրացնելու համար հեռավար տարբերակով առաջարկվում է ավելացնել մասնագիտական գործնական օրինակների (միջազգային համալսարանների կողմից կիրառվող) ուսումնասիրումն ու ակտիվ քննարկումը (case study):
Գործնական պարապմունքների արդյունավետությունը բարձրացնելու համար առաջարկվում է հանձնարարականների մեջ ներառել վարպետաց դաս տեսանյութերի դիտումը, դրանց վերաբերյալ քննարկումների կազմակերպումը:
Առաջարկվում է նաև տեսական դասերի մի մասը իրականցնել օնլայն տարբերակով համավարակի ավարտից և դեմ առ դեմ կրթության անցնելուց հետո:
Դասընթացին ուսանողների ներգրավվածությունը ապահովելու նպատակով առաջարկվեց լսարանային պայմաններում դասերի անցկացման դեպքում դասը առցանց հեռարձակել, որպեսզի ներկա չգտնվող ուսանողները կարողանան միանալ դասին: Բացի այդ, լինի դասի տեսաձայնագրությունը, որը ևս տրամադրվի ուսանողներին:

Համավարակն ինքնին փորձություն էր ՀՀ կրթական համակարգի համար: Այն էլ ավելի զգացնել տվեց առկա բացերը, երբեմն էլ անհրաժեշտությունից ելնելով կրթության կազմակերպիչներին ու բոլոր շահակիցներին մղեց ստեղծագործ մոտեցման: Ուսումնական հաստատությունների մեծ մասի համար հստակ դարձավ, որ կրթության հեռավար պատշաճ կազմակերպմանը լիովին պատրաստ լինելը դարի հրամայական է: Կարծում ենք՝ նրանցից շատերը կրթական գործընթացի հեռավար կազմակերպմանը լիովին պատրաստ լինելը կընդգրկեն իրենց երկարաժամկետ ծրագրերում:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ուսանողության ձայն